community

The New Apostolic Church around the world

04/2025/AM

Սրտի լեզուն

Խմբագրական
Յուրաքանչյուր
իրավիճակում բարին անել

Ժամերգություն
Ճշմարտության ոգի

Վարդապետական ուսմունք
Ապաշխարություն-
դարձ դեպի փրկության
ճանապարհի

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Յուրաքանչյուր իրավիճակում բարին անել

Ժամերգություն

4 Ճշմարտության ոգի

Շրջանային բաժին

10 Առաքյալ Ռենե Ֆոլլմաննի 2025 թվականի առաջին այցը Հայաստան

Մանկական անկյուն

12 Հիսուսի ծնունդը

14 Այցելություն Զոշուային Գերնսիում / Նորմանդյան կղզիներ/

Տեսություն

20 Ապաշխարություն - դարձ դեպի փրկության ճանապարհ

Ընդհանուր լուրեր

20 Սիրով: Վստահությամբ: Աստծո հետ:

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Զեսսիկա Քրեմերի
Շապիկի ետևի լուսանկարը՝ Ֆրանկ Շուլդթի / Արևմտյան Գերմանիայի Նորառաքելական եկեղեցի

Յուրաքանչյուր իրավիճակում բարին անել

Լուսանկարը՝ Միջազգային Նորաարարեալան ելեկեցի մեկնարանը

Դու կոչված ես բարին անելու- դա հավանաբար ավելի հեշտ է այն ժամանակ, երբ կարողանում են ճաշակել գեղեցիկն ու բարին:

Ինչ-որ մեկի մոտ հենց այդպես չի լինում, նա հավանաբար մտահոգություններ է ունենում իր առողջության, երեխաների, ընտանիքի պատճառով, կամ, հավանաբար, ունենում է դրամական խնդիրներ և խնդիրներ մասնագիտության մեջ: Եվ, այնուամենայնիվ, յուրաքանչյուրը կոչված է բարին անելու:

Հիսուսը գալիս և ասում է նրան, ով խնդիրներ և հոգսեր ունի՝ ,, Ես այստեղ եմ, մի մտահոգվիր: Ես կհոգամ քեզ համար, ես օգնելու եմ քեզ: Բայց, խնդրում եմ, անգամ այս դժվար օրերին մի մոռացիր քո փրկության մասին: Մի մոռացիր քո կոչման մասին, քո փրկությունը պետք է

լինի քո առաջնայնությունը: Եվ ջանք գործադրիր նաև այս դժվար օրերին, այս առանձնահատուկ իրավիճակում, չնայած բոլոր հոգսերին՝ բարին անել,,:

Որոշ քույր-եղբայրներ ներկա ժամանակներում անվստահ են: Ես դա հասկանում եմ: Երբ ապրում են այն բոլոր ցնցումները, որոնք կան աշխարհում, հասարակության մեջ, կարելի է արդեն մի քիչ անվստահ լինել: Որոշներն անգամ վախենում են, թե ինչ է լինելու իրենց հետ և հարց են տալիս, թե ինչպես պետք է այս ամենը շարունակվի: Հիսուսը գալիս է նաև ձեզ մոտ և ասում՝,, Ես այստեղ եմ, մի մտահոգվիր: Ես ամեն ինչ իմ վերահսկողության տակ ունեմ: Ես ավարտելու եմ իմ պլանը: Ես ավարտելու եմ իմ գործը: Ես անելու եմ իմը: Բայց, խնդրում եմ, մի մոռացիր քո փրկության մասին և մի մոռացիր, որ դու կոչված ես բարին անելու,,;

Սրտագին ողջույններով՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Ճշմարտության ոգի

Լուսանկարները՝ Սիմոն Քիանբրաիի, Ֆրանկ Շուլցթի /Միջազգային Նորաստեղծական եկեղեցի Արևմտյան Գերմանիա

Հոգեգալստյան ժամերգությունը գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը տոնեց Վիսբադենում/ Գերմանիա/

Հովհաննես 16;13

Երբ որ գա նա՝ ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ:

Հոգեգալստյանը Սուրբ Հոգի Աստվածը հայտնվում է մարդկանց: Սուրբ Հոգով լցվելու հետ միասին՝ իրականանում է նաև այն խոստումը, որ Հիսուսը տվել էր իր յուրայիններին: Նա նրանց նախապես ասել և խոստացել էր, որ ուղարկելու է Մխիթարիչին, ով ուզում է նրանց պաշտպանել, օգնել և առաջնորդել: Եվ, Հոգեգալուստից սկսած՝ Սուրբ Հոգի Աստվածը գործում է Քրիստոսի եկեղեցում և տեղեկացնում է Աստծո ճշմարտությունը- հատկապես այնտեղ, որտեղ գործում է առաքելոց ծառայությունը: Սուրբ Հոգին ճշմարտությունն է ասում և մեզ առաջնորդում է դեպի ճշմարտություն: Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում Աստծո մասին: Սուրբ Հոգին մեզ վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Սուրբ Հոգու վկայությունը շատ հստակ և պարզ է՝ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է: Ով տեսնում և լսում է Հիսուս Քրիստոսին, նա տեսնում և լսում է Աստծուն: Աստված իսկապես այնպիսին է, ինչպիսին Հիսուս Քրիստոսն էր: Իհարկե,

Աստված հայտնվել է իր արարչագործությունում: Նա հայտնվել է Հին կտակարանում: Բայց Աստծո ճշմարիտ էությունը կարող է միայն ճանաչելի լինել Հիսուս Քրիստոսի խոսքերում, գործերում և էության մեջ:

Միշտ ինձ ցավ է պատճառում այն, երբ ես նկատում եմ, որ դեռ շատ քրիստոնյաներ Աստծուն տեսնում են այնպիսին՝ ինչպիսին նա հայտնվել է Հին կտակարանում՝ որպես խիստ Աստված, ով կանոններ է սահմանում, որպես պատժող Աստված, ով սպանում է նրանց, ովքեր իր կողմից չեն: Խնդրում եմ, ամբողջ աշխարհի սիրելի քույր-եղբայրներ, դա չէ մեր Աստվածը: Մեզ համար պարզ է, որ ճշմարիտ Աստվածն այնպիսին է, ինչպիսին՝ Հիսուս Քրիստոսը: Մենք ճանաչում ենք Աստծուն Հիսուս Քրիստոսի խոսքերում, գործերում, էության մեջ: Եթե մենք ուզում ենք իմանալ Աստծո կամքը, մենք դա չպետք է փնտրենք Հին կտակարանում, ոչ էլ արարչագործության և աստղերի մեջ, կամ՝ որևէ այլ տեղ: Աստծո կամքը մեզ համար Հիսուս Քրիստոսի Ավետարանն է:

Աստված կատարում է այն, ինչ խոստանում է: Նա միշտ պահում է իր խոստումները:

Եվ, երբ մենք փնտրում ենք Աստծո կամքը, այն չենք փնտրում մարդկանց կամ երևույթների մեջ, որոնցում գերբնական ուժը զորեղ և գործուն կլինի: Մենք մեր օգնությունը փնտրում ենք Հիսուս Քրիստոսի մոտ այստեղ՝ Եվրոպայում, Աֆրիկայում, ամբողջ աշխարհում: Մեր օգնականը Հիսուս Քրիստոսն է, ոչ թե՝ որևէ մի մարդ, որևէ մի գործ, որտեղ գործուն կլինի գերբնական ուժը: Աստծո կամքը մենք ճանաչում ենք Հիսուս Քրիստոսի Ավետարանում, ոչ թե՝ մարդկանց մեջ կամ որևէ այլ տեղ: Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ դեպի ճշմարտություն: Եկեք ամրագրենք՝ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստվածն է:

Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում: Նա կատարում է այն, ինչ խոստանում է: Նա մեզ ասում է՝ Վստահիր Աստծուն, նա վստահելի է, նա անելու է հենց այն, ինչ խոստացել է: Բայց, հիմա մենք պետք է հասկանանք, որ Աստծո ճշմարտությունը միշտ վերաբերում է հավիտենական կյանքին: Սուրբ Հոգու մասին ուսմունքը վերաբերում է հավիտենական կյանքին: Ինչու՞ եմ ես սա ասում, որովհետև բազմիցս եղել է այնպես, որ խոսել եմ քույր-եղբայրների հետ, ովքեր շատ հիասթափված են եղել: Նրանք խնդիր են ունեցել, հետո եկել է սպասավորը՝ հոգևորականը, և ասել նրանց՝ մի մտահոգվիր, լավ է լինելու, սակայն, լավ չի եղել: Խոստումը չի իրականացել: Սիրելի քույր-եղբայրներ, ինչու՞ է այդ հոգևորականն այդպես ասել: Ես անձնապես այսպես եմ կարծում, որ նա այդ խոսքով ուզեցել է վկայել, որ ինքը կիսում է նրա ցավը, նա հույս ունի և աղոթում ու ցանկանում է, որ Աստված անի այն, ինչի համար նրան աղոթում են: Եվ հաճախ հենց այդպես էլ լինում է:

Բայց, կարող է և այնպես լինել, որ Աստված ասի՝ ոչ, ես այլ մտադրություն ունեմ: Դա մենք չենք կարող բացատրել և հասկանալ, սակայն, դա չպետք է հանգեցնի նրան, որ մենք կասկածենք Աստծո սիրո վրա: Աստծո ճշմարտությունը միշտ առավելապես վերաբերում է հավիտենական կյանքին: Աստված անում է այն, ինչ խոստանում է: Նրա խոստումները միշտ պահպանվում են: Իսկ ով անում է այն, ինչ ուսուցանել է Հիսուս Քրիստոսը, երբեք չի հիասթափվի, կհասնի հավիտենական կյանքին:

Մի երկրորդ կետ էլ, որ մենք պետք է ամրագրենք այս Հոգեգալստյան տոնին, դա այն է, որ Աստված ճշմարիտ է, նա վստահելի է: Նա մեզ տալու է հավիտենական կյանք, որը խոստացել է մեզ:

Արևմտյան Գերմանիայի տարածաշրջանային եկեղեցու երիտասարդները կազմում են երգչախումբը

Հոգանք այն բանի համար, որ մեր ,այո,ն մնա ,այո,՝ այո՝ Աստծուն, ոչ՝ չարին:

Նա ավարտելու է իր գործը և ոչինչ չի կարող նրան խանգարել: Եթե ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին և հետևում եմ նրան, ապա կունենամ հավիտենական կյանք: Աստված ճշմարտությունն է, նա անում է այն, ինչ խոստանում է:

Աշխարհում ճշմարտությունն այսօր խնդիր է դարձել: Դա այդպես է եղել նաև հին ժամանակներում, հիշեք Պիղատոսին: Երբ նա լսում է Հիսուսին, ասում է՝ Այո, իսկ ո՞րն է ճշմարտությունը / հմտ. Հովհաննես 18,38/: Ճշմարտությունն այսօր խնդիր է շատերի համար: Իրականությունն այնքան տարբեր է ներկայացվում և մեկնաբանվում: Կա մեկ իրողություն և հարյուրավոր ձևեր՝ դա ներկայացնելու և մեկնաբանելու: Այսպես և շատ մարդիկ այսօր անվստահ են: Իսկ ո՞րն է ճշմարտությունը: Շատ մարդիկ համոզված են, որ մեզ ճշմարտությունը չեն ասում, որ ինչ-որ բան թաքնված է ասվածի ետևում: Դա հանգեցնում է նրան, որ մենք տեղեկացված ենք լինում նրանցից, ովքեր ասում են միայն այն, ինչ ուզում են լսել: Եվ դա ես կարող եմ իմ հաստատել ամբողջ աշխարհում՝ հաշվի առնելով իմ սահմանափակ փորձը, դա ամենուրեք այդպես է: Այդ թյուրիմացության պատճառով մարդիկ ուզում են միայն լսել այն, ինչ ուզում են լսել: Մնացածը նրանց այլևս չի հետաքրքրում: Իսկ դա հանգեցնում է նրան, որ հասարակությունը միշտ բաժանված է լինում:

Ո՞րն է ճշմարտությունը: Եղբայր, քույր, Հիսուս Քրիստոսի Ավետարանն է ճշմարտությունը: Այն արդեն ճշմարտություն է եղել և հավերժ ճշմարտություն է մնալու: Հիսուս Քրիստոսի Ավետարանը - մենք տեսնում ենք աշխարհը և աշխարհում կատարվող իրադարձությունները Ավետարանի լույսի ներքո: Մենք մեր շրջապատի մարդկանց տեսնում ենք Ավետարանի լույսի ներքո: Մենք տեսնում ենք մեր կյանքը Ավետարանի լույսի ներքո: Մենք տեսնում ենք մեր ապագան և աշխարհի ապագան Ավետարանի լույսի ներքո և այլն: Եկեք այս երրորդ կետը ամրագրենք՝ մեզ համար Ավետարանը ճշմարտություն է, և մենք ամրագրում ենք այդ ճշմարտությունը, և մեր որոշումները, մեր կյանքը հիմնում ենք այդ ճշմարտության վրա:

Ներքևում՝ Շրջանային առաքյալներ Փյոշելը, Լամբերթը, Շուլթեն, Քրաուզեն, Էխուլան և Էրիշը / ձախից աջ/

Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում նաև մեր մասին: Անմիջապես մտածում ես՝ օ, այո, հիմա տգեղ բան է լինելու: Սուրբ Հոգին վկայում է Հիսուս Քրիստոսին: Նա մեզ ցույց է տալիս նրա փառահեղությունը, նրա կատարելությունը: Եվ, եթե ես ինքս իմ հանդեպ հիմար և անազնիվ չեմ, ապա պետք է ամրագրեմ՝ օ, դրանից ես շատ հեռու եմ: Եվ դա ճիշտ է՝ Սուրբ Հոգին մեզ գիտակցել է տալիս մեր սեփական սխալականությունը: Նա մեզ համար պարզ է դարձնում, որ առանց ողորմածության չենք կարող փրկվել: Բայց, նա մեզ նաև ասում է, թե ինչպես կարող ենք հասնել ողորմածության: Սուրբ Հոգին մեզ ցույց է տալիս, թե մենք իրականում ինչպիսին ենք: Այո, մենք ոչ կատարյալ ենք, դու կարիք ունես ողորմածության, այս ճանապարհին դու կարող ես ողորմածության արժանանալ: Բայց, Սուրբ Հոգին նաև մեզ ասում է ճշմարտությունը մեր մասին՝ ճշմարտությունը քո և յուրաքանչյուրի մասին: Նա մեզ ասում է՝ Աստված սիրում է քեզ այնպիսին, ինչպիսին դու այսօր կաս: Աստված սիրում է քեզ, Աստծո Որդին իր կյանքը տվել է քեզ համար: Աստված սիրում է քեզ: Երբ բոլորը քեզ անտեսում են և դատապարտում, մի լսիր նրանց, լսիր Աստծուն՝ նա սիրում է քեզ: Սա է ճշմարտությունը: Դու Աստծո կողմից սիրված Աստծո զավակ ես: Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում:

Սուրբ Հոգին մեզ ոչ միայն ասում է, թե մենք ինչ պետք է անենք, այլ նաև՝ թե մենք ինչ կարող ենք անել: Մի քանի շաբաթ առաջ ես զրուցում էի մի խումբ երիտասարդների հետ: Քույրերից մեկը հարցրեց՝ Գլխավոր առաքյալ, ասա մեզ, թե ինչպես կարող եմ ճանաչել այն շնորհները, որ Աստված տվել է ինձ: Իհարկե, երբ մեկը կարողանում է լավ երգել, ապա դա դժվար չէ իմանալ՝, օ, երգելու այդ շնորհը Աստված է նրան տվել- ինձ մոտ դա այդպես չէ: Ես երիտասարդին ասացի՝ Դա պարզ է՝ ուղղակի արա այն, ինչ Աստված պահանջում է քեզնից: Աստված քեզ ճշմարտությունն է ասում, և, երբ դու անես այն, ինչ Աստված քեզնից պահանջում է, ապա դու կհայտնաբերես, թե ինչ շատ շնորհներ ունես: Դու կհայտնաբերես, որ դա կարողանում ես անել այն , ինչ Աստված քեզնից պահանջում է: Եվ այդ դեպքում քո հարաբերությունը Աստծո հետ կարգավորված կլինի: Եթե դու դառնաս Աստծուն և ասես՝ Ախ, սիրելի Աստված, ես կարողանում եմ լավ երգել, ինչպե ս կարող եմ ես քեզ ծառայել: Դու ինքդ կորոշես քո ծառայությունը: Բայց, եթե

դու դառնաս Աստծուն և ասես՝ Աստված, ինչ ես դու ինձնից սպասում, Աստված քեզ կհիշեցնի՝ Ես քեզ դա վերջին ժամերգության ժամանակ եմ ասել, արա այս կամ այն: Այդ դեպքում դու կնկատես, որ դու կարողանում ես դա անել և կբացահայտես քո շնորհները, որոնց մասին դու բոլորովին չգիտեիր:

Ես գիտեմ, հին նորառաքելական ուսմունք է, որ Աստված մեզ քարոզի մեջ ցույց է տալիս հայելին և մեզ ասում է՝ հիմա նայեք նրա մեջ, դա համապատասխանում է իրականությանը: Սիրելի քույր-եղբայրներ, Աստված օգնում է մեզ՝ ինքներս մեզ ճանաչելու: Նա դա անում է ամենից առաջ քարոզվող խոսքով: Դա մենք պետք է ընդունենք և դրա համաձայն գործենք: Ժամերգությունից առաջ ես սպասավորների սենյակում էի: Այնտեղ ես տեսա, ինչպես ընդունված է ամբողջ աշխարհում, որ իմ նկարը կախված է պատին, դա տասներկու տարի առաջվա նկարը էր, երբ ես ձեռնադրվել էի: Դրա կողքին կախված էր հայելի: Դա ինձ օգնեց հասկանալու, որ ժամանակն անցել է: Բայց, դուք հասկանում եք ինձ, եթե ես միայն նայեմ նկարին, այնտեղ ես երիտասարդ եմ երևում: Բայց դա չէ իրականությունը, այդպիսին չեմ ես: Աստված մեզ հայելու մեջ ցույց է տալիս, թե ինչպիսին ենք մենք այսօր: Նա մեզ ճշմարտությունն է ասում քարոզի մեջ, և ես նորից եմ խնդրում ձեզ՝ մենք պետք է

Հելգե Մուչլերի նշանակումը գլխավոր առաքյալի օգնական

Շրջանային առաքյալներ և - օգնականներ ձախից աջ՝ Մխվանազի, Մարթիգ, Չիսեքեդի,
Թարգմանիչներ՝ Մյուլլեր, Էրնսթ /ծածկված/ Իսնուգրոհո, Վոլլ / ծածկված/
Շրջանային առաքյալներ՝ Մինիո, Մուչլեր, շրջանային առաքյալ Դոյբել / ծածկված/

ջանք գործադրենք քարոզը գործի վերածելու: Դա է ճշմարտությունը մեր մասին:

Սուրբ Հոգին ուզում է նաև մեզ օգնել ճշմարիտ դառնալ և Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ լինել: Աստված ճշմարիտ է, նա վստահելի է, նա անում է այն, ինչ խոստանում է: Մենք էլ ենք Աստծուն որոշ խոստումներ տվել: Մենք պետք է մերժենք չարը և հավատով ու հնազանդությամբ հետևենք Հիսուս Քրիստոսին: Հոգանք այն բանի համար, որ մեր ,այո,-ն մնա ,այո,՝ այո Աստծուն, ոչ՝ չարին: Եկեք Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ լինենք ու մնանք:

Մարդիկ այսօր այնքան շատ ժամանակ ու էներգիա են կորցնում, որպեսզի իրենց ներկայացնեն այն ձևով, ինչ ձևով որ կուզենային ընդունվել: Դուք գիտեք, որ ես իսկապես խնդիր ունեմ դրա հետ: Այնքան շատ ժամանակ և էներգիա են կորցնում իրենց ներկայացնելու համար: Ցանկանում են, որ այդպիսին տեսնեն իրենց: Մարդիկ ուզում են մյուսներին դուր գալ, նրանց կողմից ընդունվել, ճանաչվել և հարգանքի արժանանալ: Ճշմարիտ քրիստոնյան ջանում է Աստծուն դուր գալ: Նա օգտագործում է իրեն տրված ժամանակը, ուժն ու էներգիան, որը ստացել է Աստծուց, որպեսզի զարգանա Հիսուս Քրիստոսի պատկերով: Նա ուզում է ամենից առաջ Աստծուն դուր գալ: Նա ուզում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդը լինել: Սիրելի քույր- եղբայրներ, սա վերջին կետն է, որը մենք պետք է ամրագրենք Հոգեգալստյան այս տոնին՝ մենք պետք է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները դառնանք: Սուրբ Հոգին օգնում է մեզ՝ ինքներս մեզ ճանաչելու և օգնում է մեզ՝ փոխվելու: Նա ուզում է մեզ փոխակերպել, որպեսզի ավելի նմանվենք Հիսուս Քրիստոսին: Սա է Սուրբ Հոգու ներգործությունը: Նա մեզ ճշմարտությունն է ասում Աստծո, մեր շրջապատի մարդկանց, մեր ապագայի և մեր մասին: Ամեն:

Գլխավոր առաքյալ՝ ,, Այսպես, սիրելի քույր-եղբայրներ, այս պահին ես պետք է այս ժամերգության քարոզի մասը ընդհատեմ: Ես նայում եմ հայելուն և հետո՞: Կարիք չկա ասելու, որ տեսնում եմ ինձ՝ այս մարդը ծերացել է: Վերջին սեպտեմբերին ես դարձա 65 տարեկան, և ես մտադրվեցի հաջորդ Հոգեգալստյանը՝ 2026-ին հանգստի անցնել: Արդեն ժամանակն է, արդեն մեկ տարի առաջ որոշելու ինձ հաջորդողին: Դուք կարող եք պատկերացնել, որ դա հեշտ գործ չէ: Ես երկար եմ աղոթել, այո, Աստծուն դիմել, որպեսզի նա ցույց տա այն մարդուն, որին նա նախատեսել է դառնալ մեր գլխավոր առաքյալը: Ես գիտեմ, որ շատ առաքյալներ և քույր-եղբայրներ ևս դա ասել և աղոթել են Աստծուն: Սիրելի առաքյալներ, սիրելի քույր-եղբայրներ, Աստված լսել է այդ աղոթքները:

Այսօր ես կարող եմ բացարձակ վստահությամբ և հավաստի տեղեկացնել, թե ում է Աստված նկատի առել՝ դառնալու մեր գլխավոր առաքյալը: Նա շրջանային առաքյալի օգնական Հելգե Մուչլերն է Հյուսիս-Արևելյան Գերմանիայի տարածաշրջանային եկեղեցուց: Ես նրան այսօր նշանակելու եմ գլխավոր առաքյալի օգնական: Եվ, եթե Տերը նախաօրոք չգա և ես դեռ ողջ լինեմ, հաջորդ տարի Հոգեգալստյանը Քափշթադթում, Հարավային Աֆրիկայում, նրան կձեռնադրեմ գլխավոր առաքյալ: Շրջանային առաքյալի օգնական Մուչլերը խոսում է գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն: Դուք կարող եք պատկերացնել, թե ինչպես է նա իրեն զգում: Սիրելի քույր-եղբայրներ, եթե հիմա ամբողջ աշխարհի քույր-եղբայրները առ Աստված աղոթեն և սիրելի Աստծուն ասեն՝ օգնիր նրան, ես կարող եմ հավատալ, որ այս աղոթքը կգործի: Նա տեսնելու է դա, իսկ մենք դա ապրելու ենք,,:

Շրջանային առաքյալի օգնական Մուչլեր՝ ,, Սիրելի եղբայրներ և քույրեր, սիրելի հյուրեր և ընկերներ, խոսքը հենց այն բանի մասին է, որ մենք ամբողջ աշխարհում միասին գովաբանենք և փառաբանենք Տիրոջը: Ես կցանկանայի խոսքս կարճ կապել, քանի որ Հոգեգալուստ է, խոսքը դրա մասին է: Սա Աստծո կոչն է և ես ամբողջովին վստահում եմ դրան, և իսկապես ուրախանում եմ, որ ձեզ հետ միասին գլխավոր առաքյալի կողքին երկրի վրա հավատի ճանապարհով կարող եմ գնալ, մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը: Ես աղոթելու եմ բոլորիդ համար: Կարո՞ղ եմ իմ փոքրիկ խնդրանքն արտահայտել՝ խնդրում եմ, աղոթեք ինձ համար,,:

Հիմնական մտքեր

- Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում Աստծո մասին:
- Սուրբ Հոգին մեզ ճշմարտությունն է ասում մեր մասին:
- Նա օգնում է մեզ դառնալու Քրիստոսի ճշմարիտ վկաներ:

Առաքյալ Ռենե Ֆոլլմաննի 2025 թվականի առաջին այցը Հայաստան

Մայիսին առաքյալ Ռենե Ֆոլլմաննը կատարեց 2025-ի իր առաջին հովվական այցը Հայաստան:

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ



Վանաձորում առաքյալը ծառայեց սաղմոս 119, 76-ի աստվածաշնչյան խոսքով

2025-ի մայիսի 19-21-ը նա Հայաստանում էր և տոնեց մի քանի ժամերգություն: Քանի որ ժամանակը շատ կարճ էր, առաքյալը չկարողացավ այցելել բոլոր համայնքները: Դրա փոխարեն մեսացած համայնքների հավատացյալ քույր-եղբայրները մեկնեցին մոտակա հարակից համայնքներ՝ նրանց հետ միասին տոնելու առաքյալի կողմից անցկացվող ժամերգությունը: Օրինակ, Մեսանի համայնքը ժամերգությանը մասնակցեց Երևանում, Օձունի համայնքը՝ Ալավերդիում, Ստեփանավանի համայնքը՝ Վանաձորում;

Այցի առաջին օրը առաքյալ Ռենե Ֆոլլմաննը ժամերգություն անցկացրեց Երևանում: Նա ծառայեց Հովհաննեսի 11, 25, 26-ից վերցրված աստվածաշնչյան խոսքով: Ղազարոսի հարության մասին դրվագի օրինակով առաքյալը նորից բացատրեց, թե ինչ կարևոր է հավատը: Ինչպես ասում են, հավատը կարող է լեռներ շարժել: Մենք պետք է հաստատուն պահենք մեր հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ, որպեսզի հասնենք մեր հավատի նպատակին: Դա անհրաժեշտ է հատկապես այս դժվար ժամանակներում, երբ մարդկությունը բազմաթիվ մարտահրավերների առաջ է կանգնած: Մենք իրավունք չունենք կորցնել մեր հույսը, քանի որ Տերը մեզ միայնակ չի թողնում:

Ինչպես միշտ, Երևանի համայնքի կանանց երգչախումբը հարստացրեց ժամերգությունը

Առաքյալը Ալավերդու համայնքում Սուրբ Հաղորդության համար հացի և գինու առանձնացման խոսքերն է ասում
Ալավերդու համայնքում հավատացյալ քույր-եղբայրները տպավորված էին քարոզից

Առաքյալը Գյումրիի համայնքում է
Գյումրիի համայնքի քույր-եղբայրները տոնում են Սուրբ Հաղորդությունը

Գյումրիում հավատացյալ քույր-եղբայրները շնորհակալկություն են հայտնում առաքյալին և հրաժեշտ տալիս

հոգեպարար երգեցողությամբ: Ժամերգության վերջում նրանք երգեցին նաև մի քանի հայկական հոգևոր երգեր: Դա ժամերգության հիանալի ավարտ էր: Հավատացյալ քույր-եղբայրները իրենց շնորհակալությունը հայտնեցին առաքյալին բովանդակալից և ուսուցողական ծառայության համար:

Գյումրիի համայնքում առաքյալ Ֆոլլմանը սարկավագուհիներին մեկին հնարավորություն տվեց ծառայելու զոհասեղանի մոտ: Թեև դա նրա առաջին ծառայությունն էր զոհասեղանի մոտ, նա կարողացավ այդ ժամերգության համար ընտրված աստվածաշնչյան խոսքը պարզ և հասկանալի մեկնաբանել: Դա լավ օրինակ էր մյուս սպասավորուհիների համար: Գյումրիի համայնքն ունի նաև մանկական երգչախումբ: Ժամերգության ավարտին ելույթ ունեցան երգչախմբի երեխաները: Ներկաները բարձր ծափողջույններով շնորհակալություն հայտնեցին գեղեցիկ ելույթի համար: Առաքյալը շնորհակալություն հայտնեց և խոստացավ, որ հնարավորինս հաճախ կնախաձեռնի հովվական ճանապարհորդություն դեպի Հայաստան:

Նույն օրը առաքյալը ժամերգություն անցկացրեց Վանաձորում: Առաքյալ Ֆոլլմանը այնտեղ ծառայեց Սաղմոս 119, 76-ի աստվածաշնչյան խոսքով: Խոսքը Աստծո ողորմածության մասին էր: Առաքյալը պարզաբանեց, որ ողորմածությունը Աստծո նվերն է մեզ, և, որ մենք միայնակ չենք կարող այն վաստակել: Այդ ողորմածությունը մխիթարում է մեզ: Այո, Աստված գթասիրտ է, նա սիրում է մեզ, սակայն, նա մեզնից նաև սպասում է սեր, հավատ և հույս: Եվ այդ ամենը մենք պետք է ապացուցենք մեր գործերով: Երբեք չմոռանանք 2025-ի համար գլխավոր առաքյալի կողմից տրված կարգախոսը՝ Ժամանակն է, բարին անելու:

Հաջորդ օրը առաքյալը ժամերգություն անցկացրեց Ալավերդիում: Այստեղ ևս նա ունեցավ բովանդակալից քարոզ: Հավատացյալ քույր-եղբայրները ուշադրությամբ էին լսում: Վերջում միասին և արժանապատիվ կերպով տոնվեց Սուրբ Հաղորդությունը: Երկու համայնքների / Ալավերդու և Օձունի/ անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին առաքյալին և սրտագին ողջույններ ուղարկեցին իրենց գերմանացի քույր-եղբայրներին:

Առաքյալի կողմից անցկացվող ժամերգությունները տպավորիչ են և սպասելի: Նույն օրը նա մեկնեց

Առաքյալի 2025 թվականի առաջին ժամերգությունը Երևանի համայնքում
Առաքյալ Ֆոլլմանը շնորհակալություն է հայտնում երգչախմբի անդամներին գեղեցիկ երաժշտության համար

ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 2, 1-20-Ի

Գաբրիել հրեշտակը ուղարկվեց Նազարեթ: Այնտեղ ապրում էր Մարիամը, ով նշանված էր Հովսեփի հետ…

Գաբրիելը գնում է Մարիամի մոտ և ասում նրան . ,, Մի վախեցիր, դու ողորմածություն ես գտել Աստծո առաջ: Դու որդի ես ունենալու, որին անվանելու ես Հիսուս: Նա Աստծո Որդին է,,:
Որոշ ժամանակ անց Օգոստոս կայսրը մի հրաման արձակեց, ըստ որի իր երկրում պետք է մարդահամար անցկացվի:
Այդ նպատակով յուրաքանչյուրը պետք է մեկներ այն քաղաքը, որտեղից ծագել էր իր ընտանիքը: Այնտեղ նրանց պետք է հաշվառվեին և գրանցվեին:
Մարիամը Հովսեփի հետ գնաց նրա ծննդավայր Բեթղեհեմ:
Երբ Մարիամն ու Հովսեփը հասան Բեթղեհեմ, նրանք ազատ իջևանատուն չգտան: Քաղաքը լի էր մարդկանցով:
Հիսուսը ծնվեց: Մարիամը նրան փաթաթեց խանձարուրում և դրեց մսուրում: Գիշերը հովիվները դաշտում հովվում էին իրենց

հոտը: Հանկարծ լուսավորվեց ցերեկվա նման: Մի հրեշտակ մոտեցավ հովիվներին, նրանք շատ վախեցին:
Սակայն հրեշտակը նրանց ասաց. ,, Մի վախեցեք, որովհետև այսօր Դավթի քաղաքում՝ Բեթղեհեմում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա ձեզ համար նշան կլինի, խանձարուրով փաթաթված և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք,,:
Եվ հանկարծ այդ հրեշտակի հետ երևաց երկնային զորքերի մի բազմություն, որն օրհնում էր Աստծուն և ասում. ,, Փառք Աստծուն բարձունքներում և երկրի վրա խաղաղություն, և հաճություն մարդկանց մեջ,,:
Հրեշտակները վերադարձան երկինք: Հովիվները որոշեցին՝ ,, Եկեք գնանք մինչև Բեթղեհեմ և տեսնենք, թե ինչ բան է այս եղածը, որ Տերը մեզ ցույց տվեց,,:
Նրանք գնացին քաղաք և գտան Մարիամին, Հովսեփին և երեխային մսուրի մեջ: Ամենուր հովիվները պատմեցին այն, ինչ հրեշտակը երեխայի մասին իրենց ասել էր: Հովիվները վերադարձան հոտի մոտ: Նրանք փառաբանում էին Աստծուն և շնորհակալություն հայտնում այն բանի համար, ինչ լսել և տեսել էին:



Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 12 2024; ձևակերումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՋՈՇՈՒԱՅԻՆ՝ ԳԵՐՆՍԻՈՒՄ / ՆՈՐՄԱՆԴՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ/

Մեր ընտանիքը բաղկացած է չորս անդամներից՝ իմ մայր Լիննը, իմ հայր Էրսնթը, իմ քույր Դանիելեն և ես: Ետևում դուք տեսնում եք Սուրբ Պետրոս Պորտի Սուրբ Ծննդյան լուսավորությունը: Ավելի վաղ իմ մայրը աշխատում էր որպես օպտիկական ասիստենտ, իսկ հայրս աուդիտոր է: Քույրս հաճախում այն դպրոցը, որտեղ ես եմ սովորում, նա սովորում է 10-րդ դասարանում:

Իմ անունը Ջոշուա է և ես 13 տարեկան եմ: Ես ապրում եմ Գերնսիում, այն կղզիներից մեկում, որոնք գտնվում են ֆրանսիական ափերի մոտ՝ Անգլիական նեղուցում: Նորմանդյան կղզիները անգլիական թագավորի թագի սեփականությունն են, բայց չեն պատկանում Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորությանը և Հյուսիսային Իռլանդիային: Գերնսի կղզիախումբը բաղկացած է Գերնսի, Օլդերնեի, Սարկի, Հերմի և այլ փոքր կղզիներից: Մայրաքաղաքը Սուրբ Պետրոս Պորտն է: Գերնսիում ապրում է շուրջ 60 000 մարդ: Ես շատ ընկերներ ունեմ և ինձ այստեղ դուր է գալիս:



Նորմանդյան տարբեր կղզիների բնակիչները ունեն կենդանիների կեղծանուններ: Մենք Գերնսիում կոչվում ենք ,, լես անես,, - ավանակ: Ես կարծում եմ, որ Սուրբ Պետրոս Պորտի փողոցները այնքան թեք են, որ ծանր բեռներ կրելու համար մասամբ օգտվել են ավանակներից: Գերնսիի բնակիչները այդ կեղծանունը համարում են ուժեղության խորհրդանիշ, մինչդեռ հարևան Ջերսի կղզու բնակիչներն այն մեկնաբանում են որպես համառության խորհրդանիշ:

Ես սովորում եմ 9-րդ դասարանում և ունեմ շատ սիրալիր ուսուցիչներ: Ես սիրում եմ գերթե բոլոր մարզաձևերը, բայց իմ սիրելի մարզաձևը ֆուտբոլն է: Վերջերս ես մարզվում եմ թիմերից մեկում: Իմ ընտանիքի հետ ես նաև հաճույքով խաղում եմ դոմինո, կամ հայրկիս և հորեղբորս հետ՝ թենիս :

Այստեղ, ցավոք, չենք կարող պահել ընտանի կենդանի: Հարավային Աֆրիկայում, որտեղ ես ծնվել եմ, Սալլի անունով շուն ունեի: Ես նրան շատ եմ կարոտում: Քափշթադթի նկարում դուք տեսնում եք նաև իմ նախատատիկ Մա Մարգիին և իմ տատիկ Մա Վիվիենին:

Իմ սիրելի ուտեստը պիցցան է և միշտ ախորժակ եմ ունենում: Գերնսի կղզու վրա կան արագ սննդի կետեր:

Ամեն ամսվա 1-ին և 3-րդ կիրակիներին մենք տոնում մենք ժամերգություն Լես Քոթիլս կոչվող քրիստոնեական կենտրոնում: Եկեղեցու սեփական շենք չունենք: Մեր համայնքն ունի յոթ անդամ և մեկ քարոզիչ: Սա մեծ տարբերություն է Քափշթադթի հետ համեմատած, որտեղ շատ մեծ համայնքներ կան: Մեր ողջ համայնքը կազմում է երգչախումբը, իսկ ես սովորում եմ ֆլեյտա նվագել:

Լուսանկարում ես եմ մեր կոնֆիրմացիայի ուսուցչուհու և Դանիելեի հետ նրա կոնֆիրմացիայի օրը: Հաջորդ տարի ես էլ եմ կոնֆիրմացիա ընդունելու:

Ալբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն XXX; լուսանկարները՝ մասնավոր; llard1; mizin; Eric Isselée; dbrnjhrj; allard1 - stock.adobe; Illu: freepik.com

Նկարները՝ Դավիթ Սիվակի /stock.adobe

Ապաշխարություն - դարձ դեպի փրկության ճանապարհ

Բառը հնչում է որպես խղճի խայթի և ամոթի գիտակցում: Սակայն, իրականում ,, ապաշխարության,, պարագայումխոսքը գնում է խնդրի գիտակցման և նոր կողմնորոշման մասին, որը խիստ անհրաժեշտ է յուրաքանչյուրի համար, ով ուզում է հասնել նպատակին: Դա է պարզաբանում գլխավոր առաքյալի ուսուցողական շրջաբերականը:

Հոգեգալստյան իր խոսքում Պողոս առաքյալը տեղեկացնում է, որ Հիսուս Քրիստոսը Փրկիչն է, ով ուղարկված է Աստծո կողմից, որպեսզի փրկի իր ժողովրդին: Ապա նա բացատրում է իր ունկնդիրներին, թե ինչ պետք է նրանք անեն, որպեսզի փրկություն ունենան. ,, Ապաշխարեցեք. և ձեզնից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը,, /Գործք առաքելոց 2,38/:

Փրկությունը Հին կտակարանում

Հիսուս Քրիստոսի կողմից առաջարկված փրկությունը տարբերվում է նրանից, ինչին ձգտում էր Իսրայելի ժողովուրդը: Հին կտակարանում հնազանդ հրեաները ամենից առաջ սպասում էին, որ Աստված իրենց խաղաղություն և բարեկեցություն նվիրի երկրի վրա: Նրանց պատկերացումը փրկության վերաբերյալ վերաբերում էր իրենց պատմությանը: Աստված միջամտեց, որպեսզի իսրայելացիներն ազատվեն եգիպտական գերությունից: Ապա նա նրանց առաջնորդեց մի երկիր, որտեղ մեղր ու կաթ էր հոսում: Աստծո միջամտությունն ազատ կամքով էր, որը հիմնված էր միայն նրա սիրո վրա: Դրա դիմաց նա իր ժողովրդից պահանջում էր, որ նա պահի իր օրենքը:

Հետագայում տեղի ունեցան բազմաթիվ պատերազմական հակամարտություններ, ի վերջո- ռազմական պարտությունից հետո- ժողովրդի մի մասը արտաքսվեց Բաբելոն: Մարգարեները բացատրում էին, որ այդ աքսորը աստվածային կամքը չպահելու հետևանքն էր: Նրանք հալածվածներին հորդորում էին ապաշխարել: Եթե նրանք փոխեին իրենց պատկերացումները և կատարեին օրենքները, ապա Աստված նրանց համար բարին կաներ: Նրանք կարող էին վերադառնալ իրենց երկիր և ապրել խաղաղության մեջ ու բարեկեցիկ կյանքով:

Հիսուսի ժամանակներում շատ հրեաներ հույսով սպասում էին Մեսիայի գալստյանը, ով իրենց կազատի հռոմեական լծից և կվերադարձնի Իսրայելի թագավորության առաջվա փառքը: Պարզ ասած՝ մենք կարող ենք ասել, որ Հիսուսի ժամանակներում հրեաները սպասում էին, որ Տերը իրենց կփրկի նրանով,

- որ ուղղակի կմիջամտի, որպեսզի նրանք ազատվեն իրենց թշնամիներից և
- նրանց համար, ովքեր կպահեին նրա օրենքը, հնարավոր կդարձնի աստվածային խաղաղությամբ և նյութական բարեկեցությամբ կյանքը:

Փրկությունը նոր կտակարանում

Հիսուս Քրիստոսի կողմից առաջարկված փրկությունն ամենից առաջ հոգևոր բնույթ ունի: Աստված միջամտում է պատմությանը նրանով, որ երկիր է ուղարկում իր Որդուն: Քրիստոսն ազատ կամքով իր կյանքը տալիս է, որպեսզի մարդկանց ազատի մեղքի լծից: Նա ներում է երաշխավորում նրանց, ովքեր հավատում են իրեն և ապաշխարում են: Նա հավատացյալներին նվիրում է հավիտենական կյանք: Այդ հավիտենական կյանքը կայանում է Աստծո հետ կատարյալ միասնության մեջ նոր արարչագործությունում:

Փրկությունը Աստծո ողորմածության ընծան է, ոչ ոք չի կարող այն վաստակել / Եփես. 2; 4-9/: Բայց դրա նախապայմանն այն է, որ մարդը միշտ ձգտի իրեն երաշխավորած շնորհը արժանապատիվ ցույց տալ / Ֆիլիպ. 2, 12/: Ապաշխարությունն այդ հոգևոր ձգտման էական բաղադրիչն է

Նախապայման փրկության համար

Պողոս առաքյալը բացատրում է, որ նրանք, ովքեր հավատքի են եկել, պետք է ապաշխարեն, որպեսզի կարողանան մկրտվել: Դրանով նա անդրադառնում է Հիսուս Քրիստոսի ուսմունքի երկու էական կետերին՝

- ,,Ապաշխարեցեք, քանի որ երկքնի արքայությունը մոտ է,, / Մատթեոս 4, 17/:
- ,, Եթե մեկը ջրից և Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայություն մտնել,, / Հովհաննես 3, 5/: .



Ապաշխարություն հասկացությունը ընդգրկում է ինչպես զղջումը, այնպես էլ՝ խոստովանությունը: Մեղավորը պետք է գիտակցի իր մեղքը, զղջա / դա նշանակում է բարոյապես տառապել/, դառնա դեպի Աստված, փոխի իր մտածելակերպը և ընդունի այնպիսի պահվածք, որը կհամապատասխանի Աստծո կամքին:

Ապաշխարությունը մկտրության համար նախապայման է- որպեսզի ազատվեն ժառանգական մեղքից, մեղավորը պետք է մերժի չարը, հավատա Հիսուս Քրիստոսին և խոստանա հնազանդ լինել նրան:

Ապաշխանությունն անխուսափելի է անհատական մեղքերի քավության հասնելու համար: Որպեսզի ժամերգության ժամանակ տեղեկացված խոսքն իր ազդեցությունը տարածել կարողանա, մենք պետք է ապաշխարենք և դարձի գանք: Այլ խոսքերով՝ գիտակցենք մեր սխալները, զղջանք և ճիշտ որոշում կայացնենք մեզ փոխելու և մեր կողմից կատարված անարդարությունների համար փոխհատուցելու:

Յուրաքանչյուր ժամերգության Աստված մեզ առաջարկում է իր ներումը, և մենք միշտ շնորհակալ ենք լինում դրա համար: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այս հաճախականությունը կարող է հանգեցնել անհավասարակշռության: Մեզնից ո՞վ կարող է համարձակվել հաստատելու, որ ամեն անգամ, երբ լսում է խոսքը, լիովին պատրաստ է ապաշխարության: Այս իրողությունը դրամատիկ չէ, քանի որ այն հիմնված է մեր մեղավոր բնության վրա: Սակայն կարևոր է, որ մենք գիտակցենք այդ վտանգը և այս հարցով պարբերաբար ինքներս մեզ քննենք:

Դարձի և ապաշխարության կոչը Ավետարանի տեղեկացման էական բաղադրիչն է, դրանով և առաքյալների ծառայության առաջադրանքը: Խոսքը չի գնում հավատացյալ քույր-եղբայրներին մեղքի զգացում հաղորդելու մասին, ոչ էլ՝ նրանց արժեզրկելու: Սիրով և խոնարհությամբ պետք է հասկանալի դարձնել, թե ինչ է Տերը սպասում մեզնից:

Նախապայման նոր արարածի համար

Ապաշխարությունն ու դարձի գալը անբաժանելի կապված են ներքին նորացման հետ, նոր կյանքի զարգացման հետ, որը մենք ընդունել ենք: Պողոս առաքյալը հորդորում է մեզ դեն նետել հին թթխմորը / Կորնթ. Ա 5,7/: Շատ սպասավորներ արդեն ծանոթ են այդ ցավալի իրողությանը՝ երբ մենք խոսում ենք եղբայրներ և քույրերի հետ, պարզ է դառնում, որ նրանք տարիներ ի վեր նույն պատմությունն են մտաբերում և այդ հին թթխմորը ծանրաբեռնում է նրանց հավատքային կյանքը: Մեր գործը չէ նրանց դատելը, այլ մենք պետք է օգնենք նրանց նրանով, որ նրանց ասենք՝

,, Ապաշխարեցեք, քանի որ երկնքի արքայությունը մոտ է,,: Փորձենք նրանց հասկացնել տալ այդ հին թթխմորի վնասակարությունը և նրանից ազատվելու անհրաժեշտությունը: Թեման շատ նուրբ է, իսկ գործընթացը՝ հաճախ դժվար: Սակայն, մեր սերը մեր եղբայրների ու քույրերի նկատմամբ մեզ չի թողնում դա դադարեցնել:

Ճանապարհ չարի դեմ պայքարելու

Որպես Սուրբ Հոգու շնորհների պտուղ, որը մենք ընդունել ենք, մերձավորի հանդեպ սերը մեզ զգայուն է դարձնում մարդկային տառապանքին հանդեպ: Մենք պաշտպանում ենք տառապյալներին: Մենք Աստծուն խնդրում ենք չարից ազատել մարդկանց և արարչագործությունը: Աստված լսում է այդ աղոթքները, քանի որ նա ուզում է մարդկանց փրկել:

Սակայն, հաճախ Աստված չի միջամտում, ինչպես պատկերացնում են շատ հավատացյալներ: Օրինակ,

նա չի օգտագործում իր ամենազորությունը, որպեսզի լռեցնել տա զենքերը, վերացնի անարդարությունը և տնական խաղաղություն հաստատի, նաև, որ յուրաքանչյուրին հարգել տա իր պատվիրանները:

Նրա փրկության գործը այն նպատակն ունի, որ բոլոր մարդիկ կարողանան նոր արարչագործության մեջ իր և միմյանց հետ միասնության մեջ ապրել: Իր փրկության պլանի ներկայիս փուլում նա մարդկանց հասկացնել է տալիս, որ նրանք կոչված են որպես առաջնեկներ մուտք ունենալ դեպի այդ միասնություն և ապա հազարամյա խաղաղության թագավորությունում նպաստեն մյուսների փրկությանը:

Դրանից մենք հետևություններ ենք անում՝ մեզ համար մարդկության փրկությանը նպաստելու լավագույն ձևը՝ որպես ջրից և Հոգուց վերստին ծնվածներ, կայանում է նրանում, որ դարձի գանք, հին Ադամին մեռնել տանք, որպեսզի նմանվենք Քրիստոսի պատկերին: Այսպես մենք կարող ենք ,,սպասել ,, մարդկանց վերջնական փրկությանը և դրան ,,ընդառաջ վազել,, / ,,արագ ընթանալ,, այլ թարգմանություններում, հմտ. Պետրոս Բ 3, 11-13/:

Դարձի գալն ու ապաշխարությունը բխում են անձնական գիտակցությունից: Բնությունից մենք հակված ենք բողոքել չար բաներից, որոնք տեղի են ունենում աշխարհում: Բայց, մենք անմեղ զոհեր չենք: Մեզնից յուրաքանչյուրը խնդրի մի մասնիկն է: Իհարկե, մենք քրեական տարրեր չենք: Ինքնըստինքյան հասկանալի է, որ մենք ձգտում ենք հարգել Աստծո կամքը և մարդկանց օրենքները: Եվ այո, կան շատ մարդիկ, ովքեր ավելի վատ են իրենց պահում, քան մենք: Բայց, մենք ընդունենք, որ ամեն ինչ ենք, բացի կատայալ լինելուց: Մենք պետք է ավելացնենք նաև, որ մեր սխալներով նպաստում ենք չարի ուժին:

Այստեղ ևս խոսքն այն մասին չէ, որ մեզ վատաբանենք կամ ինքնադատաստանի ենթարկենք: Մենք պարզապես պետք է հասկանանք, որ մենքից յուրաքանչյուրը պատասխանատվության իր բաժինն ունի խնդրի մեջ: Եվ մենք պետք է հասկանանք, որ լուծումը նաև մեր միջոցով է լինելու: Մենք կարող ենք նպաստել այն բանին, որ իրավիճակը լավացնենք նրանով, որ մեր մտածելակերպն ու վարքը փոխենք, որպեսզի ավելի նմանվենք Քրիստոսին: Ինչքան շատ մենք հավասարվենք նրան, այնքան ավելի քիչ վատ կվերաբերվենք ուրիշներին:

Նրանով, որ Սուրբ Հոգին մեզ կոչ է անում ապաշխարության և առաջնորդում է մեզ, դրանով ուզում է մեզ ճանաչել տալ, որ մենք ինչպես խնդրի, այնպես էլ այդ խնդրի լուծման մի մասնիկն ենք: Դա վերաբերում է բոլոր մակարդակներին՝ ամուսնության մեջ, ընտանիքում, համայնքում և հասարակության մեջ: Ինչպես նախապես նշել էինք, դարձի և ապաշխարության կոչը Ավետարանի տեղեկացման էական բաղադրիչն է, եվ դրանով նաև՝ եկեղեցու: Տերն իր յուրայիններին աշխարհ չի ուղարկում, որպեսզի իր ժամանակակիցների համար բարոյական քարոզ անի: Նա մեզնից սպասում է, որ մեր օրինակով ապաշխարություն քարոզենք:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Լուսանկարները՝ Միջազգային Նորառաքելական եկեղեցի

Շրջանային առաքյալի նախկին օգնական Հելգե Մուչլերը Հոգեգալստյանը նշանակվեց գլխավոր առաքյալի օգնական

Սիրով: Վստահությամբ: Աստծո հետ:

Ոչ թե ուժ, այլ սեր և մոտիկություն մարդկանց՝ գլխավոր առաքյալի օգնականը առաջին խոսքում ցույց տվեց, թե ինչպես է նա մտածում, զգում և հավատում:

Երեկվանից հաստատվեց: Հելգե Մուչլերի՝ գլխավոր առաքյալի օգնական նշանակմամբ, Նորառաքելական եկեղեցին ունի գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի իրավահաջորդ: Մինչև 2026-ի Հոգեգալուստի ժամանակ կայանալիք նրա ձեռնադրությունը նրա առաջ ճանապարհի մի մեծ հատված կա- ժամանակ, որպեսզի ծանոթանա աշխարհով մեկ սփռված եկեղեցուն: Եվ ժամանակ, որպեսզի ծանոթանա աշխարհով մեկ սփռված համայնքերին: Սիմոն Հայնիգերի հետ զրույցի ժամանակ, ով միջազգային Նորառաքելական եկեղեցու հաղորդակցության ղեկավարն է, արդեն առաջին հարցերը հնչեցին- բաց, ազնիվ և սրտի լսելի զարկով:

Սիմոն Հայնիգեր՝
Սիրելի առաքյալ, մի քանի թվեր սկզբի համար: Դուք Նորառաքելական եկեղեցու 875-րդ առաքյալն եք և շուրջ մեկ տարի հետո ձեռնադրվելու եք տասներորդ գլխավոր առաքյալ: Եվ Դուք տասներորդ անգամ ,,այո,, եք ասելու հոգևոր պաշտոնի կամ առաջադրանքի հետ կապված: Կարո՞ղ եք հիշել ձեր առաջին ,,այոն,,:

Գլխավոր առաքյալի օգնական Հելգե Մուչլեր՝
Երբ ես պետք է ենթասարկավագ դառնայի, ես գիտեի այդ մասին: Այն ժամանակ, 1994 թվականի աշնանը ինձ այցելեց շրջանային ավագը Ֆրոյդենշթադթի իմ ծնողական բնակարան: Ես գիտեի, որ դրանից քիչ ժամանակ անց տեղափոխվելու էի Հաննովեր ուսանելու: Այդ պատճառով ես նրան ասացի .,, Հանս, ես շուտով Հաննովեր եմ գնալու սովորելու համար, ոչ մի իմաստ չկա այստեղ որևէ պաշտոն ստանձնելու,,: Նրա ռեակցիան ես կարող եմ դեռ լավ հիշել: Նա բարձր կանչեց՝ ,, Պաշտոնը պաշտոն է,,/ ծիծաղում է/ Այսօրվա տեսանկյունով դա կարող էր յուրահատուկ հնչել, բայց ես պետք է ասեմ, որ դրանով կոտրվեց իմ հակադրվելը ոչ թե խոսքերի պատճառով, այլ ես զգում էի, որ դրա հետևում ինչ-

Գլխավոր առաքյալի օգնական Հելգե Մուչլերը զրուցում է գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերի հետ

որ մեծ բան կա, և անհնար է ,ոչ , ասելը: Պաշտոնի հաջորդ քայլը սարկավագից քարոզիչ ինձ համար մեծ էր, և ես պետք է ավելի երկար մտածեի դրա մասին: Իմ ,այոն, ես դեռ սկզբում էի զգում, բայց ես ժամանակի կարիք ունեի: Ավելի շատ ժամանակի կարիք ես ունեի դեպի առաքյալի պաշտոն քայլ անելու համար: Անգամ, եթե ես վստահում եմ Աստծո կանչին, ինձ համար այդ ամենը հեշտ չէր: Ես ունեի մասնագիտություն, որը ես հաճույքով էի կատարում, իսկ առաքյալ դառնալը փոխում է ողջ կյանքդ: Բայց այդ ,այոն, կապված էր Հիսուս Քրիստոսին և գլխավոր առաքյալին հավատարմության երդում տալու հետ, ես շատ խորն էի զգում և համապատասխանորեն գիտակցում դա:

Այո, իսկ հիմա գլխավոր առաքյալի օգնականի ֆունկցիայի վերաբերյալ հարցը / կարճ դադար/: Ինձ համար ես անմիջապես զգացել եմ՝ այս գործը հսկայական է: Սակայն, եթե գլխավոր առաքյալը այս հարցով ինձ մոտ է եկել, ապա դա գալիս է Աստծուց: Նա դա խնդրել է: Ես ոչ մի շանս չունեի, քան Աստծուն վստահելը: Եվ այսպես, ես ընդունում եմ դա: Ես ընդունում եմ այդ կոչը շատ հստակ ներքին ,,այո, ասելով՝ հավատով և Աստծուն վստահելով:

Վերջին 50 տարիների ընթացքում մեր եկեղեցին զարգացման մեջ է: Ի՞նչ հին բարի ավանդույթներ կան ձեր ստում - և ո՞ր զարգացումն է ձեզ համար հատկապես նշանակալից:

Հոգու խնամքը: Հոգու խնամքը մեր եկեղեցու սյունն է: Շատ գեղեցիկ մի ավանդույթ: Եվ ես կարող եմ պատկերացնել, որ դա միշտ կենտրոնում է լինելու: Խոսքը գնում է հարաբերությունների կառուցման, նաև հարաբերությունների խնամքի մասին: Ես կցանկանայի, որ ,, հոգին խնամելու ցանկությունը,, վերածնվի, քանի որ այն գեղեցիկ փորձ կարող է լինել բոլոր հոգևորականների համար: Հոգու խնամքը կապում է, իսկ որտեղ կապվածություն կա, այնտեղ սկսվում են մխիթարությունն ու երկնքի խաղաղությունը:

Զարգացման վերաբերյալ ես հատկապես հիշում եմ գլխավոր առաքյալ Հանս Ուրվիլերին և մտածում եմ անձնական պատասխանատվության մասին: Այս առումով ես շատ գոհ եմ: Ես ուրախ եմ, որ ավելի ու ավելի շատ է հնարավոր դառնում հավատի մասին առանցվախենալու խոսելը: Առանցդատապարտելու և հավասար իրավունքներով իրար հետ հավատի մասին խոսելը շատ արժեքավոր է: Ես այսօր այլևս չեմ զգում ճնշում կամ այն սպասումը, թե ինչպիսին պետք է լինել կամ մտածել, այլ՝ ավելի շատ զգում եմ ընդունվելը և այսպիսին լինելու իրավունքը, եվ դա ես գեղեցիկ զարգացում եմ համարում:

Որոշների համար շատ բան ավելի արագ է լինում, մյուսների համար՝ շատ դանդաղ: Որոշները հարցնում են՝ ,, Արդյո՞ք սա իմ եկեղեցին է,,: Մյուսներն ասում են՝ ,, Կարո՞ղ է այն երբևէ իմ հայրենիքը դառնալ,,: Ուրեմն, ո՞ւմ կարող են, ո՞ւմ պետք է ընդհանրապես իրավացի համարել:

Ինձ համար խոսքն այն մասին չէ, որ որևէ մեկը ,, իրավացի համարվի,,: Դա իմ կամ առաքելոց ծառայության առաջադրանքը չէ: Խոսքը ճշմարտության և պարզության մասին է: Եվ կա

Ժամերգություն մեկ քրոջ հետ Իլուիսսաթում/ Գրենլանդիա/

ճշմարտություն… Ի՞նչն է ճշմարտությունը: Հիսուս Քրիստոսը: Եվ որպեսզի այդ ճշմարտության շուրջ գոյություն ունենան բազմազանություն և ամենատարբեր տեսակետներ, գունագեղ ծաղկային մարգագետնի նման՝ այդպես Եվ ինչ գեղեցիկ է, երբ կարողանում են ասել՝ Ես տեսնում եմ քեզ, ես հարգում եմ քեզ, անգամ, եթե դու ուրիշ ես: Քանի որ ես էլ եմ տարբերվում մյուսներից, ես էլ կարիք ունեմ, որ դիմացինը իր տեսակետից ելնելով ասի՝ Ես գնահատում եմ քեզ, Հելգե, քո տարբեր լինելով: Դա նաև լավ է ինձ համար:

Լոզունգ՝ Միասնություն բազմազանության մեջ: Օտարության մեջ հաճախ ոգևորվում են բազմազանությունից, որը հայրենիքում դիտարկվում է խնդիր: Ինչպե՞ս կարելի է դրան հասնել:

Ինչպես արդեն նշվել է, ես ,,գունագեղ ծաղկային մարգագետնի,, երկրպագու եմ: Սակայն, բազմազանությունը գործում է երկխոսության միջոցով: Երկխոսությունը դա համատեղ աշխատանքն է տարբերությունների վրա՝ առանց դրանք վերացնել ուզենալու: Երկխոսության մի մասն էլ հետևյալն է՝ Ես գնահատում եմ ուրիշների տարբեր լինելը:

Միասնությանը նպաստում են սերը Աստծո և մերձավորի հանդեպ, ինչպես նաև միասնական հավատքը և մեր հավատի հիմնական սկզբունքները, Հիսուսի գալստյան սպասումը, առաքելոց ծառայությունը և, և, և: Դա միավորում է: Եվ, եթե մենք մնանք լավ երկխոսության մեջ, այդ միասնության մեջ կարելի է հասնել բազմազանության:

Լինու՞մ են իրավիճակներ, երբ Դուք զգացմունքայնորեն հեռանում եք Աստծուց: Ինչպե՞ս եք Դուք ձեզ ,,վերագտնում,,:

Այո, նման իրավիճակներ ես ապրել եմ: Կյանքի դժվար փուլում ես ներքնապես հեռացել եմ Աստծուց և կշտամբել նրան: Դա մի պահ է եղել, իսկ հետո տեղի է ունեցել հրաշք: Ես զգացել եմ, որ այդ Աստվածը, որից ես հեռացել եմ, մնացել է իմ կողքին: Ես կարծում էի, որ ես արդեն շատ ուժեղ և համառ եմ: Բայց նա ավելի համառ էր: /ծիծաղում է/: Այդ Աստվածը չի հեռանում, այլ հավատարիմ է մնում իմ կյանքում: Եվ, երբ ես դա հասկացա, շուտով եկավ այն օրը, երբ ես նորից ամբողջովին դարձա դեպի նա և բաց թևերով կանգնեցի Աստծո առաջ, դիտարկեցի նրա մեծությունը և ինչպես Հոբն էր ասում՝ Ես հիմա իմ ձեռքերը դնում եմ բերանիս վրա և չեմ ուզում այլևս խոսել: Ես ոգևորված էի Աստծով, նրա ողորմածությամբ …միշտ այդպես եմ:

Առջևում՝ շրջանային առաքյալի օգնական Մանդլա Պատրիկ Միվանազի, գլխավոր առաքյալ Ժան-Լուք Շնայդեր և այժմյան գլխավոր առաքյալի օգնական Հելգե Մուլլեր

Դուք մատնանշեցիք Հոբին…

Այդ ժամանակ ես հաճախ էի կարդում Հոբի գիրքը և փորձում էի այնտեղ պատասխան գտնել: Ես իսկապես զգացի, թե ինչպես էին օտարները Հոբի նկատմամբ անարդարացի … այդ վաղահասները,ախ, այնքան իմաստուն ընկերներ: Նրա ընկերների հետ երկխոսություններում ես ինձ համար ոչ մի պատասխան չգտա, մինչև Հոբի գրքի վերջում լույս ծագեց: Հոբը մարտահրավեր է նետում Աստծոն: Աստված արձագանքում է դրան՝ Այսպես, Հոբ, ես լսել եմ քո հարցերը: Հիմա ես ունեմ մի քանի հարց քեզ ուղղված՝ Ո՞վ է ստեղծել երկիրը: Ո՞վ է ստեղծել աստղերը: Բավականին երկար ժամանակ է անցնում: Հոբը լռում է խոնարհաբար: Սակայն, Աստված շարունակում է: Հոբն այդքան հեշտությամբ չի պրծնում: Եվ գրքի ամենավերջում Հոբն ասում է՝ Հիմա ես գիտեմ, որ դու, Աստված, կարող ես ամեն ինչ անել: Երկխոսությունն ավարտվում է, խնդիրը լուծվում է: Դա հասկանալու համար ինձնից երկար ժամանակ պահանջվեց : Տառապանքի պատասխանը այնքան հասարակ է, ու ,միաժամանակ՝ դժվար: Տառապանքի պատասխանն է՝ Աստված:

2021- ից ի վեր Դուք նաև շրջանային առաքյալների ժողովի անդամ եք: Ինչպիսի՞ն էր առաջին հավաքույթը:

/ծիծաղում է/ Պանդեմիայի ընթացքում շրջանային առաքյալների ժողովից երեք օր առաջ տեղի էր ունենում տեխնիկական թեսթ: Շրջանային առաքյալներից մեկը բարձրախոսները իրար ետևից միացնում էր, որպեսզի ստուգի, թե արդյոք բոլորը գործում են: Առաջին անձնական հանդիպումը

Որպես շրջանային առաքյալի օգնական Հելգե Մուչլերը մի քանի անգամ ներկա է եղել այլ տարածաշրջանային եկեղեցիների ,,Երիտասարդների օր,, միջոցառմանը

արդեն տպավորիչ էր: Ես իհարկե հարգալից էի Աստծո բոլոր այդ կայացած և փորձառու տղամարդկանց հանդեպ: Ապա գլխավոր առաքյալը կանչում է բոլորի առաջ թեմաները քննարկելու և հարցնում քո կարծիքի մասին: Դա արդեն հուզիչ էր, բայց, մյուս կողմից դա ամբողջովին սրտանց ընդունում էր, որը ես զգացի, իսկապես սիրով լի: Դա ինձ թեթևացրեց:

Մինչ այժմ ձեր կատարած ճանապարհորդությունների ընթացքում Դուք ժամերգություններ եք անցկացրել շատ փոքր շրջանակով, օրինակ, մոտ մեկ տարի առաջ Գրենլանդիայում: 2023-ին գլխավոր առաքյալի հետ եղել եք Կոնգոյում և Կանանգայում միասնություն եք կազմել գրեթե 30 000 հավատացյալների հետ: Ինչպե՞ս եք բնութագրում այս տարբերությունները:

Գրենլանդիայում, Իլուլիսսաթում, ես ինձ ուղեկցողի հետ միասին ժամերգություն տոնեցի միակ ներկա գտնվող մեկ քրոջ հետ: Այնքան շատ մոտ, շատ եռանդուն և շատ ընտանեկան էր: Դա աննկարագրելի գեղեցիկ և հուզիչ էր:

Մյուս կողմից՝ Կոնգոյում Կանանգայի օրինակը, որտեղ 26 000 քույր-եղբայրներ էին հավաքվել, կամ նաև 2019-ի երիտասարդների միջազգային օրը: Այնտեղ անհնար էր առանձին մարդկանց դիմել: Մեծ սրահներում զոհասեղանը միշտ լավ լուսավորված է լինում, ինչը վկայում է այն մասին, որ միայն մեծ բազմություն ես տեսնում: եվ անհամեմատ դժվար է լարը ուղիղ յուրաքանչյուրի հետ առանձին միացնելը: Այնուամենայնիվ, դա ես միշտ զգում եմ- օդում կա այդ կապվածությունը Սուրբ Հոգու ուժի շնորհիվ: Այսինքն՝ ես չէի ասի, որ այդ կապը անանուն է: Դա կարող է միայն Սուրբ Հոգին ստեղծել: Ես երկուսն էլ գնահատում եմ:

Մի կողմից՝ ես լավ եմ, ինչպիսին ես կամ- Աստծո նմանությամբ: Մյուս կողմից՝ ես մեղավոր եմ, քանի որ ես միշտ չէ, որ կատարել եմ Աստծո կամքը: Ինչպե՞ս է սա համադրվում:

Դա չի համադրվում: Այս երկիմաստությունը երկիմաստություն է, որը չի համադրվում: Ինչպես ջուրն ու կրակը չեն համադրվում: Մեր ապաշխարության և աղոթքի օրը, ինչպես յուրաքանչյուր ժամերգության, Հայր մերի աղոթքից առաջ մենք միշտ փորձում ենք գիտակցել, որ մենք մեղավորներ ենք: Ամբողջովին թաթախված ենք մեղքի մեջ՝ առանց դրանից ինքնուրույն դուրս գալու որևէ շանսի: Սակայն, մյուս կողմից էլ մենք միշտ զարգացնում ենք մեր այն գիտակցությունը, որ Աստված ներում է, քանի որ Աստված ինձ լավ է համարում: Այսինքն՝ գուցե սա միայն թվացյալ հակասություն է:

Աստված միանշանակ է, մարդիկ՝ բազմանշանակ: Մենք երբեմն բարդացնու՞մ ենք քրիստոնեական հավատը: - Եթե այո, իրականում ինչքա՞ն է պարզ դա:

Իր էությամբ ամեն ինչ պարզ է՝ Աստված սեր է և սիրո մեջ վախ չկա: Եվ կատարյալ սերը վանում է վախը: Սրանք բարդ խոսքեր չեն, այլ՝ խորը ճշմարտություն: Տիրոջն ու մերձավորին սիրելը բարդ չէ: Մենք պետք է միշտ վերադառնանք այս պարզ հավատին:

Տեղեկատու

05.10.2025	Լիբրեվիլլե (Գաբուն)
12.10.2025	Կարլսրուհե (Գերմանիա)
19.10.2025	Քիչեներ (Կանադա)
02.11.2025	Վելլմար(Գերմանիա)
09.11.2025	Բյուլախ(Շվեյցարիա)
16.11.2025	Սենտ Պիտերսբերգ (ԱՄՆ)
28.11.2025	Ջեֆրիս Բեյ (Հարավային Աֆրիկա)
30.11.2025	Գկեբերհա (Հարավային Աֆրիկա)
07.12.2025	Էբերբախ(Գերմանիա)
14.12.2025	Համբուրգ (Գերմանիա)
21.12.2025	Բենսհայմ (Գերմանիա)
25.12.2025	Ստրասբուրգ(Ֆրանսիա)
28.12.2025	Աֆոլտերն ամ Ալբիս (Շվեյցարիա)

New Apostolic Church
International